

որքերու համար, որոնք անտուն, ան-
տէր են և կորստի մատնուած:

«Նոր-Օր»ի նախորդ թիւերէն միայն մէջ
սոյն զհատուածները ինչպէս որ արդէն
ըրած կ'ենք, սոյն առթիւ գարձեալ կը կըրկ-
նենք թէ յարի՛ք մը ժամանակիկն եւ
միջավայրիկն պիտոյիցը համայնսասա-
խան ըրջալու է:

ԲԱՆԱԲԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Այնքան հեռացած չենք այն օրէն
երբ զօրավար Ֆրէնչ՝ Թրանսվալի
արեւելեան կողմը, բոց ու կրակ կը տ-
րած կը ցրուէր բանակ մը 4—5000
թշնամի զօրաց, տիրելով անոնց ար-
ջաններուն, ջորիներուն, և շատ մը
մարդիկներ ալ գերի բռնելով: Շա-
տեր այդ յաղթութեան վրայ կը յու-
սային թէ՛ հրապարակը պիտի հան-
գարտէր և այլևս կռուելու տեղի չպիտի
մնար: Բայց ընդհակառակը քանի մը
օր վերջը դարձեալ կռիւները, յար-
ձակումները վերական:

Քանի՛ քանի՛ անգամ Անգղիացի
զօրավարներ նշանակելի յաղթու-
թիւններ տարին, բայց փորձով տես-
նուեցաւ որ տարուած յաղթութիւնը
յաճախ անպտուղ մնացին: Այսօր
Անգղիացին կը յաղթէ վազն ալ Պո-
էրը, երկուքն ալ չարաչար կը յոգ-
նին, կը տանջուին ու կը մարտնչին
անպայման վիճակի մատնուած: Այն-
պէս կը կարծուի թէ՛ մինչև որ Անգ-
ղիական բանակի զօրքերը կրկնակի
և շարունակ իրարու վրայ մէկ բանի
անգամ յաջող յաղթութիւններ չի
տանին — յաղթութիւններ որք կո-
չում ունենան շրտելու Պօէրներու
ոյժը և զօրծունէութիւնը — Պօէրնե-
րը զժուարաւ պիտի կրնան անձնա-
տուր ըլլալ:

Ա. Զ. Գ. Ա. Յ. Ի. Ն.

Գեր. Առաջնորդ Տ. Յովսէփ եպիս-
կոսոս Այվազեան հինգշաբթի օր
Աղբարանըրիա իջաւ, ուր պիտի ան-
ցընէ յառաջիկայ Զատիկական տօնի
օրերը:

— Յառաջիկայ չորեքշաբթի օր-
ուան թուով պիտի հրատարակենք
ի նպատակ զիշխարային ձրի դասարա-
նի հիմնարկութեան թերթիս վար-
չութեան նախաձեռնութեամբ տրուած
թատերական ներկայացման առթիւ՝
վարչութեանս զրկուած նուիրատու-
թեանց ցանկը:

ՄԵԼԻՔԵԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹԻՒՆ

«Նոր-Օր»ի նախորդ թիւերէն մէ-
կուն մէջ ծանուցած էինք թէ՛ անդ-
ւոյս Բողոքականաց Առաջնորդարա-
նը բացաձակապէս մերժած էր Տի-
կին Լուսինա Մեղիքեանը իր անչա-
փաստ որդւոյն Գանիէլի խնամակալ
կարգել, նկատի ունենալով Տիկին
Մեղիքեանի անկարողութիւնը և այլն:

Եւ որպէս զի անչափաստ Գանիէլ
առանց խնամակալի չի մնայ, Առաջ-
նորդարանի վարչութիւնը հիմակու
հիմայ ինք պիտի վարէ անչափաստին
զործերը ցնոր անօրինութիւն:

Հետեւեալ Գանիէլի բաժին ին-
կած դրամ և գոյք ամենեւեւ Առաջ-
նորդարանի ձեռքին տակ պահուած
պիտի մնան: Անչափաստին մայրը
Տիկին Լուսինա Մեղիքեան միմիայն
ամեն ամիս Առաջնորդարանէն յատ-
կացեալ գումար մը պիտի ստանայ՝
անչափաստին անական և զարգա-
կան պիտոյքը հոգալու համար:

Առաջնորդարանի կողմէն ամենէն
խելացի կարգադրութիւնը առ եղաւ,
որով անչափաստ Գանիէլի ազգա-
կաններուն պահանջքն ալ զոչնչոյ՞մ
տրուած եղաւ կերպով մը, որոնք
առջի օրէն կը պահանջէին որ խնա-
մակալութիւնը աջալուրջ ձեռքի մը
յանձնուի:

Իրաւ է թէ Բողոքականաց խնա-
մակալութեան օրէնքին (47) երրորդ
յօդուածի տրամադրութեան համա-
ձայն՝ երրորդ անչափաստի մը հայրը
մեռնի՝ անչափաստին մայրը մեռնո-
ղին տեղ կը վարէ իր որդւոյն գոր-
ծերը, և Առաջնորդարանն ալ պտու-
րատ է խնամակալ կարգել զայն,
բայց այն պայմանաւ որ կարող պար-
կեշտ ըլլայ նա և կրկին ամուսնանալու
տրամադրութիւն չունենայ:

Այս պայմանները չը լրացնողը
խնամակալ չի կրնար կարգուիլ:

ՀԱՅՆԵՐՆ Ի ՍՈՒՏԱՆ

(ԹՂԹԱՅՑՈՒԹԻՒՆ)

Տխար Ն. Քիւրքեան՝ մեր յարգե-
լի պատահական թղթակիցը Օստուր-
մանէն կը գրէ:

«Որքերու ի նպատակ Սուտանի մէջ
կատարուած հանդանակութիւնը շա-
րունակուելու վրայ է (*), և մեծ յոյս
կայ որ արդիւնքը 400 սակոյ հաս-
նի: Այս առթիւ ի մասնաւորի շնոր-
հակալութեան արժանի է անդւոյս
Յոյն գաղթականութեան կարեւոր ան-
դամներէն վաճառական Պ. Միխայիլ
Լուկո, որ ազնուարար յանձն առած
է սոյն հանդանակութեան յաջողու-
թեանը համար ամեն աշխատութիւն
նուիրել: Ոչ նուազ շնորհակալութեան
արժանի է անդւոյս ազգայիններէն
ճաշարանապետ Մկրտիչ աղա, որ
Յոյնի մը կողմանէ ցոյց տրուած այս
մարդասիրական համակրանքին իբր
փոխարինութիւն, փութաց քսան սակ-
ւոյ արժողութեամբ 2 չայլամ, 1
վազը և 2 կապիկ նուէր զրկել Յու-
նաց վեհ. թագաւորին»:

(*) Սոյն հանդանակութիւնը՝ տեղւոյս
Որքասիրաց ընկերութեան միջնորդու-
թեամբ և Տխար Ս. Օստապաշեանի ձեռնարկ
կատարուած Սուտանի հանդանակութեան
շարունակութիւնն է:

Կը սիրեմք յուսալ թէ Որքասիրաց ըն-
կերութիւնը այս անգամուս ձեռք բեր-
ուած արդիւնքէն չպիտի զլամայ մաս մը
ևս հանել տեղւոյս միւս Որքասիրաց ըն-
կերութեանց, որով ցոյց տուած պիտի ըլ-
լայ միակամ ընդմիջում համերաշխութեան
ապացոյցը այս կարգի հանրային ձեռ-
նարկներու մէջ:

«Նոր-Օր» այս առթիւ պարտք կը զգայ
շնորհակալութիւն ամեն անոնք որք խղճմտօրէն
աջակցած են այս Որքասիրական ձեռնար-
կին: ֆապրեթի է որ ուրիշ կեղծոյթներու
ազգայիններ ևս օրինակ առնուծ այսպիսի
զուլելի ձեռնարկներէն:

Մեր յարգելի թղթակիցը չմոռնար
նաև երկազով մը ի վեր հանել մար-
դասիրական արհուլումները պրօսա-
չըրլիկ Անգլուհոյ մը: Սոյն պրօսա-
չըրլիկ Անգլուհոյն վերջերս կ'այցելէ
յիշեալ Մկրտիչ աղայի ճաշարանին
կից մէկ պարտէզը, առ ի հետաքրք-
րութիւն աննեւելու համար հոն գրո-
նուած վազը: Պարտէզ մտած պա-
հուն՝ աչքին կը դարնէ աջ կողմի
սենեակի մը մէջ անկողին պառկած
Հայ երիտասարդ մը հիւանդ ու սրժ-
գոյն՝ անմիջապէս մտաբ կ'երթայ,
կը խօսի, ձեռքովը օշարակը կը
խմցնէ, կը մխիթարէ ու մեկնած ա-
տենն ալ հիւանդին ձեռքին մէջ կը
սպրդեցնէ մէկ Անգղիական ոսկի:

Տեսէ՛ք առարկնութիւն մը որ ու-
մանց տրուած է, կը յաւելու մեր
թղթակիցը:

ՅԱՆԻ ՆՈՒԻՐԱՏՈՒՄՑ

Գեր. Առաջնորդ Հօր Տնօրէնու-
թեամբ կազմուած Յանձնաժողովէն
Արժ. Տ. Մամբրէ և Տ. Եղիկ Բա-
հանայից ձեռք հանգանակուած է:
Քաղաքիս Գ. վարժարանի ուղքա-
տիկ մանկանց հագուստ շինուելու
համար հանգանակութեան մասնակ-
ցող ազգայնաց անուանքն են հետեւ-
եալք, իրենց նուէրներովն հանդերձ:

Վսեմ Տիգրան Փաշա Ապրօ	300
«Տիկ. Պօղոս Փաշա Նուպար	390
Ազն. Գրիգոր Էֆ. Եղիկյան	292 50
Տիկ. Սրբուհի Կարապետեան	200
«Յ. Յակոբեան	97 50
«Սոֆիա Նահապետեան	97 50
«Մ. Աննահայ	97 50
«Արարիկ Անգրանիկեան	97 50
Վսեմ Եսաթ Այրիկ Պէյ	97 50
Իսկէնաէր Էֆ. Հօղեւորուի	97 50
Արմենակ Էֆ. Պէյլէրեան	97 50
Տխար ոմն	97 50
Իփիլիսեան Էֆ.	97 50
Յովհաննէս Էֆ. Նախնախ	97 50
Վաղարշ Էֆ. Մաճարեան	97 50
Գարրիէլ Էֆ. Լէքէճեան	77
Դէպք Էֆ. Թօփալեան	100
Տիկ. Մարգարիտ Պէրպէրեան	50
Սեդրաք Էֆ. Դաւիթեան	47 50
Մեարով Էֆ. Աղամեան	60
Եղարթ Արիեան	50
Յովհաննէս Էֆ. Տէվրիշեան	48 75
Յակոբեան Եղարթ	48 75
Առաքել Էֆ. Պէրպէրեան	40
Յովհաննէս Էֆ. Տիրատուրեան	40
Յովհաննէս Էֆ. Եսլեճեան	40
Տխար ոմն	40
Յարութիւն Էֆ. Արթիւնեան	40
Մկրտիչ Էֆ. Պալքեճեան	40
Մատթթ աղա Դաղարտեան	40
Ստեփան աղա Յակոբեան	40
Եսաթ Պէյ Մանուկեան	40
Եղարթ Սիր. Աննաորեան	40
Եղարթ Եսայրեան	30
Խաչիկ աղա Կիւմրիշեան	30
Գարրիէլ Էֆ. Խ. Միքայէլեան	25
Յակոբ Էֆ. Կարապետեան	20
Լեւոն Էֆ. Կիւմրիշեան	20
Ոմն Գ. Ի. Ս.	20
Ոմն	20
Տխար Յակոբ Օհանեան	20

«Ոմն	20
Եղարթ Քէօշեան	20
Յ. Քէմհանեան Էֆ.	20
Երուանդ Էֆ. Աւագեան	20
Գ. Էֆ. Իսապ. Եսան	20
Ոմն	20
Ծառուր Էֆ. Մաթիկեան	20
Իան Մխար	20
Տիգրան Նաղաճեան	10
Կարապետ Գմբժեան	10
Տիգրան Պուտախեան	10
Կարապետ Երզնկացեան	10
Բիւզանդ Մինէճեան	10
Ոմն	10
Ոմն	10
Ոմն	10
Ոմն	10

3772

ԱՂԲԱՏԱՍԵԱՄ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Աղբատանամ ընկերութեան Բնդ-
հանուր ժողովը պիտի գումարուի
յառաջիկայ կիրակի, 7 Ապրիլ 1901,
կէս օրէ յառաջ, եկեղեցական տրա-
րողութիւնէն անմիջապէս յետոյ, աղ-
բային մանկապարտէզի որահին մէջ:

ՕՐԱԿԱՐԳ

1. Միամտայ հաշուետուութիւն

Գործ. ժողովոյ:

Գիւնս կը հաւատոյ թէ Պատ.
անդամը պիտի փութան ներկայ ըլ-
լալ սոյն նախն իրենց ընկերական
պարտականութիւնը կատարելու հա-
մար, մանաւանդ պէտք է քաջ հա-
մալուին թէ ամբողջ տարեշրջանի մը
մէջ իրենց մի քանի վայրկեաններու
զահողութեամբը միայն ժողովը պիտի
կրնայ մեծամասնութիւն ունենալ, ինչ
որ անհրաժեշտ է տրուելի որոշմանց
վաւերական ըլլալուն, առանց այդ
մեծամասնութեան ներկայ եղող ան-
զամներն ալ անզորութեան պիտի
զատապարտուին:

Ի դիմաց Գիւնսի Ընդհ. ժողովոյ

Աղբատանամ ընկերութեան
Առնապարտ Առնապետ
Հ. Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ Լ. ԿԻՄՈՒՆԵԱՆ
Գահիրէ 2 Ապրիլ 1901

ՀԵՈԱԳՐԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

— Պ. Պրատրիք յայտարարած է
թէ՛ Հարաւային Ափրիկէ օդնութեան
զրկուած 21,000 զօրք յոնվար 1ին
տեղերին հասած են, և թէ 22,000
զօրք ևս ճամբայ ելած են զէպի
նոյն տեղը:

— Գափթաունի մէջ 315 հոգի
ժանտախտէ բռնուած են մէկ օրուան
մէջ (ապրիլ 3ին), որոնցմէ 22ը մե-
ռած են:

— Պ. Տէլքասէ Ապրիլ 20ին Ս.
Բէթէրպուրիկ պիտի երթայ:

— Մարտ 24ին Ս. Բէթէրպուրիկի
մէջ տեղի ունեցած խռովութիւննե-
րու պահուն համալսարանի ուսանող-
ներէն 35 հոգի սպաննուած են:

— Մանչուրիոյ մէջ խռովութիւն-
ները երթալով կը սաստկանան.
Ռուս զօրավարը իր կառավարութե-
ան պահանջած է որ ընդ փոյթ օդ-
նութեան զօրք հասցնէ:

Տ Ե Ղ Ա Կ Ա Ն

Տամատ Կահուտ փաշայի որդիքը իշխան Սադրահատին և Կարայրը հինգ-չարթի օր և Բ. Խաթին ներկայացնալով երկար տեսակցութիւն մը ունեցան :

Երէկ առաւօտեան ժամը 9 ու կէսին էքսքրէտով իշխանները մեկնեցան Աղեքսանդրիա, ուրկէ սիրտի ուղևորին Ձուիցէրիա :

Տամատ Մահուտ փաշա հաւանական է որ յառաջիկայ Ապրիլ 14 ին Ն. Բ. Մայր Խաթիւհին Պոլիս տանող «Մահրուտ» շոգեհատով Պոլիս վերադառնայ :

Ն. Բ. Խաթիւր Մարտի յաղաբակին մէջ երէկ հացիկերսթ տուալիանի ներքև, ուր հրատարած էին Լորտ Գրոմբը և մէկ քանի նախարարներ :

Հինգշաբթի օր Սիտի-Կապրի մօտ երկաթուղւոյ կառավարման գիծէն կը շեղի. կրկու մարդ կը մեռնի և երեք մարդ կը վերադառնան :

Անգղիայէն 43 հազիէ բաղկացեալ զերաւանական խումբ մը Գահրէ հասած է, որ յառաջիկայ Ապրիլ 8էն սկսեալ շարք մը ներկայացումներ պիտի տայ ընդ հովանաւորութեամբ Լորտ Գրոմբի :

ԿՍՐԵՒՈՐ ԱԶԴ

«Նոր-Օր»-ի Ա. տարեշրջանը լրանալու մօտ ըլլալով, յառաջիկայ շաբաթ օրուան թուով պիտի հրատարակենք տարեկան լրագր. Հաշուեկրչուը, հանգերձ մանրամասն ծանօթութիւններով :

Սոյն Հաշուեկրչոյն պիտի կցենք նաև բոլոր բաժանորդներուն անունները, իրենց վճարումներովը, Հետևաբար անոնք որ մինչև ցարդ չեն վճարած, հաճին գէթ առ ի կանոնաւորութիւն մեր հաշուի, փութով գրկել իրենց բաժնեկրչուը, մինչև յառաջիկայ չորեքշաբթի :

ԱԶԳԱՅԻՆ

ՍՍ.ՀՄԱ.ՆԱԴՐՈՒԹԻՒՆ

ՀԱՅՈՑ

(Շաբ. մախրոզ թիւէն)

Այս անուկին մուտքն են՝ թաղին ժողովրդեան կողմէն տրուած թաղական սուրբը. Եկեղեցւոյ և Դպրատան կալուածոց և կամուսները. Եկեղեցւոյն հասոյթները. կրտսեալ կամ ուրիշ կերպիւ եղած նուերները կայն: Ելքն են՝ թաղին Եկեղեցւոյն և Դպրատանց ծախքն ու աղքատաց տրուելիք օգնութիւնները :

Ամեն թաղական խորհուրդ իր թաղին մէջ կը զանազան, ամուսնութեանց և վախճանմանց արձանագրութիւնք պիտի ընէ կանոնաւոր կերպով մասնաւոր Տուժարի մը մէջ :

Յօդ. 54. Թաղական խորհուրդները իրենց պաշտօնին վերաբերեալ գործոց մէջ Տեսուչ խորհուրդներուն հետ ուղղակի յամբարտութիւն ունին. այսինքն՝ զպրատանց

ՏՈՒՆԱ ՄԻԻՋԻԿԻՍԱՆ

(ԽՈՒՍՄԱԿԱՆ ՕՐԵՆԿՄԻՏՈՒԹԻՒՆ)

Ս. ՓՈՓՈՋԵԱՆ

Սոյն հրատարակութեան առաջին մասը՝ Երկրպետական արգարութեան Գործոց Նախարարութեան կողմէն նիւթական վարձատրութեամբ գնահատուած և Երկրպետի գաղտնաբերութեան գործածութիւնը պաշտօնապէս ընդունուած է :

ԲՈՎԱՆԳՆԻՍԿՈՒԹԻՒՆ

Ընդհ. տեսութիւն Ճառանդական օրինաց և ժառանգութեան իրաւունց ծագման վրայ. — Ճառանդութեան պայմանները. — Աղլակաւորութիւն և աստիճանները. — Գերութիւն և ժառանգութեան հետ ունեցած կապերը. — Ճառանդութեան գրկող պատճառները. — Մարդասպաններու ժառանգութիւնը. — Տիէթ (մարդու արեան գինը). — Ճառանդութեան մը պարտքը և պահանջը. — Ճառանդորդներու կարգը իրենց աստիճաններովը :

Ճառանդութեան օրէնքին որամագրութիւնները ուրոյն ուրոյն մեկնութեամբ են: Գրքոյկին վերջը գրուած է ցանկ մը որ մատչելի եղանակաւ կը նշանակէ թէ ժառանգութեան օրինական բաժնիները ինչպէս կը բաժնուին :

Երկրորդ մասը մօտ ժամանակէ լոյս պիտի տեսնէ՝ ինքնակալութեան կտակի, Սպանութեան, Արեան Գնոյ վրայ ընդարձակ ծանօթութիւններով: Գին 10 ԴԱՀ. ՈՂՂ

ԾԱԽՈՒ ՀՈՂ

Այն-էլ-Շեմսի կայարանէն 12 վայրկեան հեռավորութեամբ Գաֆր-Կամուս անուն գիւղին առջև 10 ֆէտատն հող ծախու հանուած է Տիար Արմենակ Աստուածատուրեանի կողմանէ ամառական վճարումներով: Սոյն հողը բաժնուած է 42 կտորի, իւրաքանչիւրը 1,000 քառակուսի մէթր տարածութեամբ և ամեն մէկ կը տարը պիտի ծախուի 2,000 դրուչի: Յատակազծին և այլ տեղեկութեանց համար գիտել առ Տիար Արմենակ Աստուածատուրեան ի Գահրէ: 3-4

Համար՝ Ուսումնական խորհուրդին հետ. անտեսական և զրամական գործոց համար՝ Տնտեսական խորհուրդին հետ. դատի վերաբերեալ գործոց համար՝ Գաղտնաբերական խորհուրդին հետ: Եւ ասոնց ամեն մէկին որոշեալ ժամանակներ համար պիտի տան իւրաքանչիւրին վերաբերեալ գործոց վրայ: Յօդ. 55. Իւրաքանչիւր թաղական խորհուրդ իր թաղին ժողովրդեան կողմէն կ'ընտրուի:

Ամեն աղջային անհատ որ բռն և հինգ տարին լրացուցած է. և ըստ 67րդ. յօդուածոյ Մահմանագրութեան՝ ընտրութեան իրաւունքն զատառտանապէս զրկուած չէ, իրաւունք ունի մասնակից ըլլալ ընտրութեան թաղական խորհրդոյ անդամոց:

Յօդ. 56. Թաղական խորհրդոյ անդամներուն պաշտօնը չորս տարի կը տևէ. հինգերորդ տարւոյն սկիզբը կը նորոգուին, և անմիջապէս վերընտրելի են:

ՄԱՆԱԳԱՐՆՈՐԴՈՒԹԻՒՆ

ՄԵԼԻՏՈՊՈԼԻ ԵՐՈՒՍՏՂԷՅ

25 ՕՐ ՊԱՂԵՍՏԻՆՈՒ ՄԵՋ

(Շաբ. 77 թիւէն)

Այս բազարը յաջողութեամբ վերադառնալով, շտապեցայ գտնել Պ. Աւետիք Թոփալեանը, որոյ հետ գնացի նախ և առաջ Գաղղիական հիւպատոսի մօտ, որ վաւերացնել ամբ անցազիրս: Բայց որքան յուսահատական եղաւ դրութիւնս, երբ իմացայ որ Գաղղիական հիւպատոսը փարիզ է գնացեր՝ համաշխարհային ցուցահանդէսէ օգտուելու համար և իւր պաշտօնը յանձնել է Օսմանեան հիւպատոսին . . .

Միթէ այս մարդը ուրիշ՝ և ըրիտուեալ փոխանորդ չի կարող գտնել, որ տանիկ հիւպատոսին է յանձնել իւր նշանաւոր պաշտօնը, . . . զարմանալով և ցաւելով հարցուցի Պ. Թօրալեանին:

— Այս բազարի մէջ առաջնակարգ պետութիւններէ գրեթէ ամեն միւր ունի իւր հիւպատոսը: Անգղիական հիւպատոսարանս ալ՝ ահա՛ թէ անդին կերակայ, ըսաւ Պ. Թօրալեանը:

— Գնանք Անգղիոյ հիւպատոսին մօտ, թերևս նա՛ անցազիրս վաւերացնելու զործին մէջ՝ ինձ կ'կարողանայ օգնել իւր խելացի խորհուրդներով:

Բարձրահասակ և նիւթար կազմուածքով անգղիական հիւպատոսի հետ շուտով գեմ յանդիման եկանք՝ հիւպատոսարանի մեծ սրահին մէջ:

Միմեանց հետ ծանօթանալէ յետոյ, պատմեցի նորան անցազիրս և իմ պիտի բոլոր անցածները ու ինդրեցի վաւերացնել ապարհիտ անցաթուղթս, ըսելով:

— Իբրև ուխտաւոր պարտական եմ և Երկրպետ երթալ, որտեղ Յիսուս մի բանի տարի իւր մանկութիւնը անցուցած է իւր Մօր և Հօր հետ: Արդեք այս հիման վրայ գուր չէք կարող անցաթուղթս վաւերացնել:

Հաւատացած եղիք, որ եթէ ես ձեր անցաթուղթը վաւերացնեմ, գուր այն ժամանակ աւելի ևս արգելքների կը հանդիպիք . . .

— Կը զարմանամ, որ Գաղղիական հիւպատոսը փոխանակ ձեզ յանձնելու իւր պաշտօնավարութիւնը, յանձնել է Օսմանեան հիւպատոսին . . .

— Թեև ցաւելի է, սայց ինչ կրնանք ընել . . . Երբեմն ստիպողական համապատասխանեալ հետ հաշտուելու օգտակար է, պատասխանեց հիւպատոսը:

Սա այն հիւպատոսն է, որի վրայ երկկողման մեզմ ժամանակ հարբած Ռուս նաւատիրները, զինուորները կողոպտելու նպատակով՝ յարձակուել էին, երբ սա որսորդութեան անցեալ տարի տուն կ'վերադառնայ եղեր, շնորհիւ իւր ճարտիպութեան՝ հազիւ հազ կազատուի շարագործների ձեռքէ՛ առանց որ և է վնաս կրելու:

Յարգելի հիւպատոսը աւելի անհանդիստ չընելու համար՝ հետացանք՝ առանց իմ ցուրտ մի ճար գտնելու՝ Անգղիական հիւպատոսարանէ ևս:

Սիվասապօլ գաղտնի կերպով անգամուայ անյաջողութիւնը՝ անցազիրս վաւերացման վերաբերութեամբ՝ զիս ամենեկին չի վճատեցուց. ստախ շուտով սխեցի մտածել մի ուրիշ ելք մտախ:

Յանկարծ միաբն եկաւ որ Սիվասապօլի մէջ կայ «Ռուսական Պաշտօնախումբ»-ը, որն սովորական աւելի աման գներով Ռուս ուխտաւորները կ'տանել և յետ կը բերէ Երուսաղեմ:

— Պ. Թօրալեան, «Ռուսական Պաշտօնախումբ» ընկերութեան, ներկայացուցիչը Սիվասապօլի մէջ ար անգ կը բնակի, — Հարցուցի:

— Այդ ընկերութիւնը բազարէս մէջ ո՛չ մի ներկայացուցիչ չունի: Բայց Օտեսոս բազարի մէջ անշուշտ կը լինի, որովհետև այս տեղէն շատ Ռուս ուխտաւորներ կերթան նախ Օտեսոս, կի՛լեանին Ս. Փանթլեկիմնի, կամ Ս. Անդրէասի և կամ Ս. Եղիայի վանքերը, ու յետոյ կուգան ընկերութեան:

— Սիվասապօլէ գեպի Օտեսոս կ'ըր շողեալ կերթայ, — Հարցուցի:

— Վաղը, կէսօրէն յետոյ, ժամը 3ին, պատասխանեց Պ. Աւետիք Թօրալեանը:

Բազարի մի բանի նշանաւոր տեղերը այցելելէ յետոյ, միւս օրը ճանապարհուցայ դեպի Օտեսոս «Ալեքսանդր Ա.» անունեալ շոգեհատով, ուր հասայ կէսօրէ առաջ ժամը 11 ու կէսին, Օրդոստի 24-ին, 1900 թուականին:

Իբրև ուսու յուխտաւոր գնացի ուսաց Սուրբ Եղիայի վանքը, և ներկայացայ վանքի հիւրընկալին:

Ը. ԱԶԳԱՅԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

ԿԱՏՄՈՒԹԻՒՆ ԵՒ ՊԱՐՏԱՌՈՒԹԻՒՆ

Յօդ. 57. Աղջային Ընդհանուր Ժողովը հարկի բառուսն Երեսփոխաններէ կը բաղկանայ. որոնց՝

Ա. Մէկ եօթներորդ մասը, այսինքն ըրտանը, Եկեղեցական Երեսփոխանք են, զոր կոստանդնուպօլսոյ մէջ գտնուող Եկեղեցականք կ'ընտրեն:

Բ. Երկու եօթներորդ մասը, այսինքն բառուսը, գաւառներէն գալիք Աղջային Երեսփոխանք են:

Գ. Չորս եօթներորդ մասը, այսինքն ութտունը, կոստանդնուպօլսոյ թաղերէն ընտրուած Երեսփոխանք են:

Յօդ. 58. Կրօնական և ֆալաքական Ժողովոց անդամները Ընդհանուր Ժողովին ներկայ կը գտնուին. բայց եթէ Երեսփոխան ընտրուած չեն՝ Ընդհանուր Ժողովին մէջ բուէ չունին:

Յօդ. 59. Ընդհանուր Ժողովը նիստ չկրնար ընել՝ մինչև որ անգամաց մեծագոյն

մասը՝ այսինքն գոնէ եօթանասուներեք հօգի ներկայ չըլլայ:

Յօդ. 60. Ընդհանուր Ժողովին պատան է՝ Պատրիարքը, կաթողիկոսը և Աղջին գլխաւոր պաշտօնատարները, և կրօնական ու ֆալաքական Ժողովոց անդամները ընտրել: Աղջային Ժողովոց վարչութեանը հսկողութիւն ընել. սոյն ժողովներուն վերաբերեալ՝ բայց իրենց ձեռնհասութեան վեր համարուած գործերը որոշել և վճել. և Աղջային Մահմանագրութիւնը անխախտ պահել:

Յօդ. 61. Ընդհանուր Ժողովը կը դուրսուրի՝

Ա. Ըստ վաղեմի սովորութեան ամեն երկու տարին անգամ մը. ապրիլ ամսոյ վերջերը՝ Աղջային վարչութեան երկամսայ ընթացքին տեղեկագիրը մտիկ ընելու. և Ելմասական պաշտօնակալաց ձեռքը ժողովուած և ծախս եղած գումարներուն ընդհանուր ընդհանուր հաշիւը տեսնելու. և քննելու, կրօնական և ֆալաքական Ժողովոց բոլոր անգամները փոխելով՝ ուրիշներ ընտրելու, և յետագայ երկու տարւան մէջ Աղջային տուրքը ինչպէս տնօրինելիք սահմանելու համար:

(Շաբուսակելի)

—Որ կողմն կուգար, պարիշա (Տեր Հայր) հարցուց ինչ հիւրընկալը:

—Տարիկեան նահանգի Մելիտոպոլ քաղաքէ:

—Որ կողմն ճանապարհորդել:

—Ուխտաւոր եմ, դեպի Երուսաղէմ ճանապարհորդելու եմ:

—Ունիք անցագիր, հարցուց հիւրընկալ վարդապետը:

Ես իսկոյն հանեցի անցագիրս և սուր վարդապետին:

—Շատ լաւ. շողենաւ որ կարգով դնուալու էր:

—Երբորդ կարգով, պատասխանեցի:

—Այն ժամանակ դուք պետք է ձեր Երուսաղէմ երթալ գալուն համար վճարէք քսան և հինգ րուբլի, իսկ անցագիրը վաւերացնելու համար երկու-երեք րուբլի:

Պահանջուած գումարը, 27 րուբլին, ուրախութեամբ վճարեցի:

—Ինչպէս են առ հասարակ Տարիկեան նահանգի ժողովուրդները: Այս տարուայ հունիսը լաւ էր, թէ ոչ, հարցուց հիւրաւոր հիւրընկալը:

—Որովհետև մի բանի տարիէ ի վեր առատութիւն եղած չէ, ուստի ժողովուրդները զգալի կերպով աղքատացան:

Հիւրընկալ վարդապետը ցուակցելով ժողովուրդը աղքատանալուն, հրամայեց իւր ծառային զետեղել զիս վանքի սենեակներէ մէկին մէջ:

Ահա այս վանքի մէջ ինը օր մնալէ վերջը՝ հարիւր Ռուս ուխտաւորներէ բաղկացած խմբի հետ՝ վաւերացուած անցագիրս ստանալէ յետոյ՝ ճանապարհուցայ, Երֆա գաղտնի շողենալով՝ դեպի Երուսաղէմ:

Եւ երբ Երֆայի մէջ Տանկաց հողի վերայ առաջի անգամ Ռուս բազմաթիւ ուխտաւորների հետ՝ ոտք դրի, աւ հետեւ ետև մաքատան տանիկ պաշտօնեաների շարքի առջևն ուխտաւորներս կանցնէինք, յիշեալ պաշտօնեաներն մին շարքի վերջին պաշտօնեան հարցուց ինչ համար տանկերէն:

—Պո՛ւ ի՞նչ ի՞նչ սիր սիր սօր:

Վերջի պաշտօնեան ալ՝ երբ նորան մտակցայ՝ հարցուց ինչ:

—Ռու՛ս . . . Ռու՛ս . . . ձեռքերով Ռուս ուխտաւորների վրայ ցոյց տալով:

—Ռուս . . . Ռուս . . . —պատասխանեցի՝ ցոյց տալով Ռուս ուխտաւորների վրայ, ու անցայ առաջ:

Այնուհետև տանիկ պաշտօնեաները այլ ևս ինձմով չի գրադուցան, և ես՝ առանց որ եւ է արգելի՛ն գիւղացի Ռուս ուխտաւորներէ հետ հասայ Երուսաղէմի Ռուսաց վանքը:

Ուխտաւորաց այս վանքը հասնելէ կէս ժամ անցած չէր, երբ մեզ հաւաքեցին ճաշարանը և զոհարանական մաղթանք կատարելէ վերջը՝ հրաւիրեցին ընթրիք ընել:

Երեկոյեան ժամը ինն էր, երբ ընդրիքը վերջացուցինք:

Որովհետև ինչ համար ամենայն վտանգ անցած էր տանիկ կառավարութեան կողմանէ, ուստի շտապեցի իմ իրեղենները ստանալ ուխտաւորների զեկավարէն և յանձնեցի զանոնք մի ուխտաւորի՝ որ սուրի ինչ հետեւելով Հայոց վանքը:

Հայոց վանքի ճանապարհը երկուքս ալ չգիտէինք. մէկին—միւսին հարցնելով առաջ կերթայինք. երբ՝ ստեայ՝ որ շատ ուշանալու ենք, առաջի հանդիպող խանութը մտայ և հարցուցի:

—Ով՞ կրնայ ինչ ցոյց տալ Հայոց վանքի ճանապարհը:

(Շարունակելի)

ՍՐ. ՔՆՆ. ՍՍՄՈՒԷԼԵՆ

Ա. Զ. Դ

Եղիպտոսի, Արտասահմանի և կովկասի արդոյ բաժանորդներէն անոնք որ մինչև ցարդ վճարած չեն իրենց բաժանորդագրիները, կը խնդրուի որ հաճին անյապաղ վճարել:

Եղիպտոսի բաժանորդները կրնան Մանստ-Բոթով ուղարկել իրենց բաժանորդագրիները. թերթիս վերելը նշանակուած հասցէին:

ԿՈՒՋԷՔ ԲԱՂԴԵՐՆԻԴ ՓՈՐՁԵԼ

Գնեցէք ժողովրդական Տարեցոյցէն հետ մը, ուր շատ մը զուարճալի և օգտակար հատուածներու հետ կը գտնուի նաև զեղեցիկ բաղդացոյց մը պէտք եղած բացատրութեամբ:

Սոյն Տարեցոյցէն և Պարզ Օրացոյց գնել փափաքողք թո՛ղ հաճին գիմել առ Տ. Օհան Խնտաման, որ պատրաստ է ուրիշ ամէն տեսակ զրքերու մասին յանձնարարութիւնք փութով կատարել փոքրիկ կանխավճարով մը: Երջակայ քաղաքներէն Տարեցոյցի և Օրացոյցի մասին եղած յանձնարարութեան համար գրամի տեղ թըզթաղարշմ կընդունուի:

Տարեցոյցին գինը 10 Ղրշ. ողջ Պարզ օրացոյցինը 2 "

Ա. Զ. Դ

Շատերու կողմէ յայտնուած փափաքի մը գոհացում տալու և մեր ընթերցողներու գիւրութիւն մը ընծայելու նպատակով, այսուհետև մեր թերթը հատով պիտի ծախուի Շարա Ապա-էլ-Աղիլի «կիզըր Պ. ԿԱՐԱՊԵՏ ԵՐՁՆԿԱՅԵԱՆԻ խանութը ինչպէս նաև Գրթ-Պէյ փողոցի ծայրը և Թըրամիլէյնքու կայարանին մօտ ծխավաճառ Պ. ՄԱՐՏԻՐՈՍ ԳԱՍՏԱՊԵԱՆԻ քով:

Le Gérant J. MUNIER

ՊԱՆԳ ԼԻՕՆԷՋ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՈՐԾԱԿԱԼ ԵԳԻՊՏՈՍԻ

Մ. ՍՍՍՕՅԵԱՆ

Լիոնի հանրաժամութիւնը գրամատուցը, այս անգամ սենցաւ իւր Եղիպտոսի գործակալնալ, Տ. Մկրտիչ Սօսոյեան, որ իւր հրապարակային ցոյց տուած պարկեշտ գործունէութեամբ ամենուս վտանգութիւնը կը վայելէ:

Սոյն գործակալութիւնը, 11 Սեպտ. թիւ իրեն յանձնուած և Լիոնի քաղաքապետութեան պաշտօնապէս վաւերացուած փոխանորդագրի համաձայն, պիտի կատարէ Պանգ Լիոնէզի միջոցաւ ամեն տեսակ գրամական և ֆուտի ֆոնդիէի, վիլ աը Բարիի և Գաղղիական ամէն արժեթուղթերու գործողութիւններ, գանձումներ, մասկան չիւլին գումարի մը խնայողութեամբ ձեռք կը բերուի քիչ առեւնէն, պահեստի բաժնեթուղթ մը, գիծակահանութեամբ երաշխաստրուած:

Փափաքողները հաճին գիմել Նիւպառի վրայ փաստարան Ռարթաքիի գրասենեակը:

Թղթակցութիւն և կամ գրամ դըրկել հետեւալ հասցէին:

Մ. ՍՕՍՕՅԵԱՆ

Ի ԳԱՀԻՐԷ

ԱՏԱՆԱԲՈՅԺ

Պ. ՆԻԿՈՂԻՄՈՍ

Վերջերս հաստատուած ի Գահիրէ, Գաֆէ տը լա Պուրսի կից, Բ. յարկ, թիւ 9 գետիկունը:

Իր բժշկէ բերնի և ակուպի ամեն տեսակ հիւանդութիւնները: Աղքատները ձրի կը գարմանէ ամեն օր, առաւօտեան ժամը 8էն 9:

ՊԵԼԱԵԱՆ-ԹԻՇՄԱՆԵԱՆ ԸՆԿ.

ԱՄԵՐԻԿԵԱՆ ԴԵՐՁԱԿՆԵՐ

ԱՐԱՆՑ ԵՒ ՏԻԿՆԱՆՑ

ԵՒ ՁԵՒԱԳԻՏՈՒԹԵԱՆ ԴՊՈՐՑ

Ապօրինի մեծ պողոտային վրայ Տայիբայի Սանիյի դիմացը, ճախկին ելեկտրական գործիներու վաճառատները:

Վերջերս Ամերիկայէն հօս եկած հաստատուած ըլլալով կը յայտարարենք արդոյ հասարակութեան լի՛ պատրաստ ենք գոհացնել մեզ գիմոյ Պատ. յանախորդները, գործի մարթութեան, գիներու չափաւորութեան և ճշգրտահալութեան կողմէն:

Մեր գործատուդ ոյն մէջ կ'աւանդուին նաև ձեռագրութեան դասեր ամերիկեան ամենալեզրի կատարելագործուած մէթոտով,

Մանրամասնութեանց համար գիմել մեր գործատուդին:

ՃԱՃԱՐԱՆ ՀԱՅՎԱԿԱՆ

ՄԻՀՐԱՆ ԵՒ ԵՂՐ. ԳԱՋԱՆՃԵԱՆ

Շարա Ապո-Սապան

Նիւս-Տիկիթիսի դեղատանին դիմացը:

Օգտուեն ու զուարճալի դիրք մաքուր ու վայելուչ սպաս. համեզ ու աննդարար կերակուրներու զանազանութիւնն, անխարդախ պատրաստութիւն. ճոխ ճաշացուցակ մը զիւրամատչելի գիներով ահա՛ Գաղանձեան եղբարց ճաշարանը:

Ով՞ որ կ'ուզէ, փորձի համար մէկ անգամ թող գիմէ, վտահ պէտք է ըլլայ թէ մշտակայ յաճախորդը պիտի գտնուայ հայկական ճաշարանին:

Տպա. «Միլիթիւն». — Թ. Ս. Փափագեանի

Տ Պ Ա Ր Ա Ն



Ի ԳԱՀԻՐԷ

Ա.ՊՏԻՆ ՓՈՂՈՑ, ՄՈՒԳԱԹԹԱՄԻ ՃԻՇԴ ԴԻՄԱՑ

ՏԷՐ ԵՒ ՏՆՕՐԷՆ

ԹՈՒԳՈՄ Ս. ՓԱՓԱՋԵԱՆ

Սոյն նորակազմ տպարանին մէջ կը տպուին հայերէն ու եւրոպական լեզուաւ ամեն տեսակ հրատարակութիւններ, պարբերական թերթեր, յարտարարութիւններ, շրջաբերականներ, այցեւորման, մահազգեր, հարսանեաց հրաւիրագրեր, կանոնագիրներ, նամակազուլաներ, պահարաններ, հաշուեցուցակներ եւն:

Յանձնարարութիւնները կը կատարուին փոքրով, աւելեայն խնամով եւ ճաշակատր սպագրութեամբ:

ԶԱՓԱԻՈՐ ԳԻՆԵՐՈՎ